տահարէին մուսլիմներին. երբ կորիչք քաղաքից դուրս ելան, մուսլիմները ի փախուստ դարձուցին նոցա եւ ստիպեցին նոցա քաղաք վերադառնալ։ Բնակիչք երկար չտատանուեցան եւ խնդրեցին իրենց ողորմութիւն եւ խաղաղութիւն շնորհել. Իյադ ընդունեց նոցա աղերսն եւ գրեց նոցա թուղթ, որոյ պատճէնն է՝

"Ցանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի. այս է Իյադ Ի. Ղանմի թուղթը առ Ուռհայի եպիսկոպոսը, թէ դուք ինձ բաց արիք քաղաքի դռները այն պայմանով, որ ամէն մարդ մի դենար եւ մի հոդայ ցորեն ինձ վճարէ. իսկ դուք ապահով էք ձեր կենաց, գոյքի եւ սորուկների վերաբերմամբ։ Դուք պարտաւոր էք՝ մոլորած (մուսլիմին) ճանապարհ ցոյց տալ եւ ճանապարհների մասին հոգալ, մուսլիմներին նախազգուշացնել (վտանգի դէպքում) եւ նոցա ձեր ոյժը (ծառայեցնել) Աստուած ականատես է եւ նա բաւական է իբրեւ ականատես։

Ինձ պատմել է Դաւուդ Ի. Աբդուլհամիդ՝ իւր հօր, իւր պապի ասելով՝ թէ Իյադի թուղթն առ Ուռհայեցիք հետեւեալն է՝

"Ցանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի. այս է Իյադ Ի. Ղանմի եւ նորա հետ գտանուող մուսլիմների թուղթն առ Ուռհայի բնակիչք, թէ ես խնայեցի ձեր արիւնը, գոյքը, արտերը, կանայք, քաղաքը եւ ջրաղացք, եթէ դուք կատարէք այն պարտականութիւնն, որ (ես դրի) ձեր վերայ. դուք մեզ պարտաւոր էք մեր ճանապարհների մասին հոգալ, հիւրընկալել մեզ, երբ մենք մոլորինք. ականատես են Աստուած, նորա հրեշտակները եւ մուսլիմք։

Ապա Իյադ եկաւ Խառան, ուղարկելով Սաֆվան Ի. ալ-Մուատտալին եւ Հաբիբ Ի. Մասլամայ ալ-Ֆիհրիին Սամուստա. Իյադ խաղաղութիւն շնորհեց Խառանի բնակչաց՝ Ուռհայեցոց հետ